ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-5770/25
19 նոյեմբեր 2025թ.

«ՊՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ ԱՔՍԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտնում ենք,որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի կողմից հայտարարված ԼՄԱՀ-ՀՄԱԱՇՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «ՊՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն: Սակայն պայմանագրի ծանուցումը ստանալուց հետո, «ՊՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ/ ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Քառյան